



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

323.1(47.925)

2-25





ՀԱՅԿԱԿԱՆ ՐԷՓՈՐՄՆԵՐԻ

Ծ Ր Ա Պ Ի Ր Ը



ԵՐԵՎԱՆԻ
ՀԱՅ ՌԵՍՆԱԳՐԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

1904, ՎԵՆԵՂ

25.11
5-0
7

26 SEP 2006
15 JAN 2010

323.1(47.925)
2-28
ly

97

ՊԱՏՐԱՍՏԻՄ Է՝ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

„ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԱՐՅՐ“

(L'ARMÉNIE ET LA QUESTION ARMÉNIENNE)

ՄԵՆ ԺԱՂՈՎԱԾՈՒ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵՉԻՈՎ

ԲԱՂԿԱՅԱԾ ՄՕՑ 1000 ԵՐԵՍԻՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԵ ՆԵԱՆԱԻՐ ԵՒՐՈՊԱՑԻՆՆԵՐԻ

Հրատարակութիւն

ԵՒՐՈՊԱՑԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

(Երազիրը տպւած է սոսնձին)



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԷՓՈՐՄՆԵՐԻ

Ծ Ր Ա Գ Ի Ր Ը

ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՕՅԻ ԴԱՇՆԱԳՐԻ 16րդ ՅՕԴԻԱԾԸ
ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԳՐԻ 61րդ ՅՕԴԻԱԾԸ
ՄԱՅԻՍԵԱՆ ԾՐԱԳԻՐ

1061

Հրատարակութիւն

ԵՒՐՈՊԱՑԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ժ Ը Ն Ե Վ
1904

17 SEP 2013

17789

ՍԱՆՍՏԵՖԱՆՕՅԻ ԴԱՇՆԱԳՐԻ

1602 ՅՕԴԻԱԾԸ

(1878, Փետրւար 19)

«Որովհետեւ ուստաց զօրքերը Հայաստանի մէջ գրաւած տեղերից յետ քաշւելուց յետոյ՝ յիշեալ վայրերում կարող են կռիւներ ու խառնակութիւններ տեղի ունենալ, որոնք երկու պետութիւնների լաւ յարաբերութիւնները կարող են խանգարել, Բարձրագոյն Գուռը յանձն է առնում անյապաղ գործադրել այն բարւոքումներն ու բարենորոգումները, որ պահանջում են տեղական պետքերը հայոց բնակած նահանգների մէջ, և երաշխաւորել նրանց ապահովութիւնը քրդերի ու չէրքէղների դէմ:»

17789

ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԳՐԻ

6102 ՅՕԴԻԱԾԸ

(1878, յունիս)

«Բարձրագոյն Գուռը յանձն է առնում անյապաղ գործադրել այն բարւոքումներն ու բարենորոգումները, որ պահանջում են տեղական պետքերը հայոց բնակած նահանգների մէջ, և երաշխաւորել նրանց ապահովութիւնը քրդերի ու չէրքէղների դէմ: Բարձրագոյն Գուռը այս նպատակի համար ձեռք առնւած միջոցները պարբերապէս պետք է ծանօթացնէ պետութիւններին, որոնք պիտի հսկեն նրանց գործադրութեան վրայ:»



4451
41

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԷՓՕՐՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ՆԵՐԿԱՅԱՅՐԱԾ ՍՈՒԼԹԱՆԻՆ

Կ. ՊՕԼՍՈՒՄ, 1895 թ. ՄԱՅՈՍԻ 11-ԻՆ, ԵՐԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆՆԵՐԻ
ՄԵԾ-ԲՐՈՏԱՆՈՒՄՈՒՄ, ՓՐԱՆՍՊՈՒՅՈՒՄ ԵՆ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ
ԼԻԱԶՕՐ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ:

Մ Ե Մ Օ Ր Ա Ն Դ Ո Ւ Մ

Մարտ-ապրիլ 1895 թ.

Սրան կցած ծրագիրը պարունակում է իր մէջ ամբողջութիւնը այն բարենորոգումների, որ անհրաժեշտ է մտցնել ներքև յիշած վիլայէթների վարչական, ֆինանսական և դատաստանական կազմակերպութեան մէջ: Օգտակար համարեց մի առանձին մեծօրանդումով ցոյց տալ վարչական բարեփոխութեան այն որոշ միջոցները, որոնք թէև դուրս են նրա շրջանակից, բայց կազմում են գլխաւոր հիմունքը նոյն այդ բարեփոխութեան և որոնց ընդունելը Բ. Կրան կողմից՝ ունի մեծ կարեւորութիւն:

Կրանք են.

- 1) վիլայէթների թւի պակասեցնելը:
- 2) վալիների ընտրութեան երաշխաւորութիւնը:
- 3) Քաղաքական յանցանքների համար դատապարտւած կամ բանտարկեւած հայերի ներումն (ամնիստիա):
- 4) Հայ էմիգրանտների և արսորականների վերադարձը:

- 5) Առկախ մնացած ընդհանուր քրէական դատաւարութիւնների վերջնական կարգաւորումն:
- 6) Բանտերի դրութեան և բանտարկեալների վիճակի քննութիւնը:
- 7) Նահանգներում մտցնելի բէֆօրմների գործադրութեան վրայ հսկելու համար՝ մի բարձր կոմիսերի նշանակումը:
- 8) Կ. Պոլսում մի մնայուն հսկող կոմիտէի հաստատումը:
- 9) Սասունի, Տալուրիկի և այլ տեղերի դէպքերից տուժած հայերի վնասների հատուցումն:
- 10) Կրօնափոխութեան հետ կապած գործերի կանոնաւորումն:
- 11) Հայերին շնորհած իրաւունքների և առանձնաշնորհումների պահպանութիւնը և ճիշտ գործադրութիւնը:
- 12) Ասիական թիւրքիայի միւս նահանգների հայերի վիճակի բարելաւումն:

I

ՎԻԼԱՅԷԹՆԵՐԻ ԹԻՒ ՊԱԿԱՍԵՑՆԵԼԸ

Քանի որ բէֆօրմները պէտք է մտցուին Երզրումի, Բիթլիզի, Վանի, Սիւզի, Մամուրէթ-Իւլ-Ազիզի և Կիարբէքի վեց նահանգներում, կարեւոր է ուսումնասիրել այդ վիլայէթների թիւը պակասեցնելու հարցը: Այդպէս անելով կարելի է առաջ բերել վարչական ընդհանուր ծախքերի որոշ խնայողութիւն, և քչացնելով վալիների թիւը, թերևս դիւրացնել նրանց ընտրու-

Թիւնը. միևնոյն ժամանակ բարձրացնել նրանց հեղինակութիւնը՝ լաւացնելով նրանց նիւթական վիճակը: Այդ բոլորը պէտք է կատարել այնպիսի եղանակով, որ ազգաբնակչութեան բաժանումը վերածւի այնպիսի ցեղագրական խմբերի, որոնք ամեն մի նահանգի վարչական ստորաբաժանումների մէջ ըստ կարելոյն համացել լինեն:

Մանօթութիւն. — Տաս տարի շարունակ, 1875 թւից առաջ, Էրզրումի էյալէթը (չըջան) բաղկացած էր հետեւեալ գաւառներից, — Չըլդըր, Ասրս, Էրզրում (այժմեան վիլայէթը), Նոյնպէս Վան, որ պարունակում էր իր մէջ Հէքքէարը, Բիթլիզ և Մուշ: Այդ էյալէթը, 1877—78 թ. պատերազմից յետոյ հետզհետէ բաժանւեց հինգ վիլայէթի և երկրի այն մասը, որ մնաց Թիւրքիայի ձեռքում, բաժանւեց հետեւեալ վիլայէթների՝ Էրզրումի, Վանի, Հէքքէարի և Մուշի: Այնուհետև Հէքքէարի գաւառը նորից միացրեց Վանի վիլայէթին, իսկ Մուշի գաւառը՝ նոր կազմած Բիթլիզի վիլայէթին: Այդ ժամանակից սկսած Մամուրէթ-Իւլ-Աղեզ սանջակը դարձաւ վիլայէթ, որի հետ միացրեցին մի քանի հարևան հոյեր: Այն ինչ, Գէրսիմի վիլայէթը կրկին դարձաւ սանջակ, Խարբերդի վիլայէթում:

II

ՎԱԼԻՆԵՐ ԵՇԱՆԱԿԵԼԸ: ԵՐԱՇՈՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ:

Մեծ պետութիւնները, կարևոր նշանակութիւն տալով վալիների ընտրութեանը, որոնցից էապէս կախւած է Բերլինի դաշնագրով նախատեսւած ըէֆօրմների իրագործումը, որոշել են առաջադրութիւններ անել Բարձր Դրանը ամեն անգամ երբ վալիի պաշտօնի համար կ'ընտրուի մի անյարմար անձ: Որպէսզի այս կէտի վերաբերութեամբ օսմանեան կայսերական կառավարու-

Թիւնը ազատ լինի անհաճոյ թիւրիմացութիւններից, մեծ պետութիւնների ներկայացուցիչները անհրաժեշտ են համարում, որ վաղօրօք, կիսապաշտօնական ձևով, իրանց յայտնւի այն անձի անունը, որի վրայ ընկնելու է ընտրութիւնը:

III

Ն Ե Ր Ո Ւ Մ Ն

Նորին կայսերական մեծութիւն սուլթանը ընդարձակ ներուժն (ամնիստիա) պէտք է շնորհէ այն բոլոր հայերին, որոնք մեղադրոււմ են և կամ դատապարտւած են քաղաքական յանցանքների համար և որոնց վերաբերմամբ ապացուցւած չէ, թէ նրանք անմիջապէս մասնակից են ընդհանուր քրէական յանցանքներին:

IV

ԷՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Բոլոր հայերը, ինչ կրօնի էլ պատկանին, որոնք առանց դատաստանի աքսորւած են օսմանեան պետութեան սահմաններից կամ իրանց բնակած գաւառից դուրս, կամ որոնք ստիպւած են եղել պանդխտել՝ զրգւած աղքատութիւնից կամ դէպքերի երկիւղից, առանց նրանց մէջ քրէական մասնակցութիւն ունենալու, թոյլաւութիւն պէտք է ստանան ազատ կերպով վերադառնալ Թիւրքիա կամ այն գաւառները, ուր նրանք առաջ ապրում էին, առանց որևէ ճնշումների տեղական իշ-

խանութիւնների կողմից: Նրանք նորից պէտք է ստանան այն սեփականութիւնները, որ ունէին երկիրը թողնելուց առաջ:

V

ԿԱՆՈՆԱՒՈՐ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒՄՆ

Այն ընդհանուր քրէական յանցանքների և ոճիրների գործերը, որոնք ներկայումս դատաստանական քննութեան տակ են, պէտք է լուծուին ստանան առանց յետաձգութեան: Այսպիսի պէտք է ուղարկեն վիլայէթները դատաստանական յատուկ յանձնաժողովներ, որոնք իւրաքանչիւր սանջակի գլխաւոր քաղաքում պէտք է շտապեն քննել չը վճուած գործերը: Նրանց վճիռները չը պէտք է ենթարկեն բողոքի: Այդ յանձնաժողովները պէտք է բաղկացած լինեն մէկ նախագահից և երկու անդամից, մէկը մահապարտական, միւսը քրիստոնեայ: Գրանց պէտք է ընկերանայ մի դատաստանական քննիչ և մէկ դատախազ (պրօկուրօր): Աերջին պաշտօնեաներից մէկը պէտք է քրիստոնեայ լինի:

VI

ԲԱՆՏԵՐԻ ԱԻՃԱԿԸ

Այսպիսի պէտք է ուղարկեն բարձրաստիճան պաշտօնեաներ՝ քննելու բանտերը իւրաքանչիւր վիլայէթում, ուսումնասիրելու նրանց նիւթական պայմանները, բանտարկեալների վիճակը և այն՝ թէ ինչպէս են նրանց պահում: Նրանք պէտք է քննեն նոյնպէս և բանտա-

պետների ու պահապանների վարմունքները, և կարող են առաջադրել որ անմիջապէս արձակեն և դատի ենթարկեն այնպիսիները, որոնք չեն կատարել այն կանոնները, որ սահմանուած են բանտային օրէնքներով:

Այդ բարձրաստիճան պաշտօնեաներից իւրաքանչիւրը պիտի ունենայ մի օգնական, որ պէտք է լինի քրիստոնեայ, եթէ պաշտօնեան մահապարտական է, և հակառակը: Նրանք պարտաւոր են, ոչ աւելի քան չորս ամսայ ընթացքում, պարտաւոր մի զեկուցագիր, որը պիտի պարունակէ նրանց նկատողութիւնները իրանց միսիայի արդիւնքների մասին, այլև այն բարեփոխութիւնները, որոնք անհրաժեշտ են բանտերի վիճակը և դրանց պաշտօնեաների գործունէութիւնը լաւացնելու համար:

VII

ՎԵՐԱՀՍՎՈՂ ԲԱՐՉՐ ԿՕՄՄԻՍԵՐԸ

Նոր վալիները՝ նշանակելուն պէս՝ պէտք է գնան վիլայէթի գլխաւոր քաղաքը՝ կազմակերպելու նահանգական վարչութիւնը, համաձայն նոր ծրագրի հիմունքների:

Նրանք պէտք է տեղաւորեն կառավարութիւնից նշանակուած մութեսարիֆներին ու գայմագամներին, և իւրաքանչիւր կաղայում բաժանեն նահիաների հողերը: Նրանք պէտք է կազմեն ընտրողական ցուցակներ, և պէտք է կատարել տան նահիաների խորհուրդների և միւզիլիաների ընտրութիւն:

Նրանք պէտք է հսկեն, որ հարկ հաւաքողները ընտրուեն առանց յետաձգման, որ նահանգի բիւջէի որոշումը և տուրքերի բաշխումը վարչական ստորա-

բաժանումներում կատարելի, որքան կարելի է շուտ:

Այս րէֆորմների շուտ և ճիշտ կատարումը պէտք է յանձնել մի Բարձր Կոմիտեերի, որը յատկապէս պիտի ուղարկել նորին մեծութիւն սուլթանից և որի ընտրութեանը հաւանութիւն պիտի տան պետութիւնները: Իր պաշտօնավարութեան ամբողջ ընթացքում նա պէտք է ունենայ լիակատար իշխանութիւն վալիների վրայ, որոնք պարտաւոր են զեկուցանել նրան այն բոլոր միջոցների մասին, որոնց ձեռնարկելու են նոր կանոնները գործադրելու համար:

Կասերական Բարձր Կոմիտեերը պէտք է ընդունի խնդրագիրներ և ծանուցումներ բնակիչների կողմից, և պէտք է վարել դրանց վերաբերմամբ այնպէս, ինչպէս նոր օրէնքներն են թելադրում: Նա իր միասիան պէտք է կնքէ մի ընդհանուր քննութիւն կատարելով բոլոր վելայթիւններում և պէտք է ունենայ իշխանութիւն՝ չը թողարկել այն միջոցները, որոնք համաձայն օրէնքի և նոր կանոնների, չեն կարող գործադրուել:

Կայսերական Բարձր Կոմիտեերին, նրա պաշտօնավարութեան միջոցին, պէտք է ուղեկցի մի օգնական, որը պէտք է լինի քրիստոնեայ, եթէ Կոմիտեերը մահմեդական է, և հակառակը:

VIII

ՎԵՐԸՔՆԵՒԷ ՄՆԵՑՈՒՆ ԿՕՄԻՏԷ

Բարձրագոյն Գրան մէջ պէտք է հաստատուի մի վերաքննիչ միայն կոմիտէ, որը պիտի հսկէ րէֆորմների ճիշտ գործադրութեան վրայ: Կոմիտէի նախագահը պէտք է լինի կայսրութեան քաղաքացիական կամ զին-

ւորական բարձր պաշտօնեաներից մէկը: Կոմիտէն կազմւած պիտի լինի վեց անդամներից, որոնք պէտք է ընտրուեն պետութեան քաղաքացիական բարձր պաշտօնեաների միջից, հմուտ վարչական, իրաւաբանական և ֆինանսական գործերում. երեքը մահմեդական, իսկ միւս երեքը քրիստոնեայ:

Այդ կոմիտէն պէտք է նիստ ունենայ Բ. Գրան մէջ, առնւազն ամիսը մի անգամ:

Կոմիտէի պաշտօնը պիտի լինի՝

Հսկել օրէնքների և կանոնների ճիշտ գործադրութեան վրայ, տեղեկացնել Բ. Գրան այն անկանոնութիւնների մասին, որոնք կը նկատուեն ազմինիստրացիայի մէջ և մատնանիշ անել այն պաշտօնեաների վրայ, որոնք չեն կատարում իրանց պարտաւորութիւնները.

Ընդունել խնդրագիրներ. քննել ազգաբնակչութեան կողմից եղած ծանուցումները և գանգատները, նոյնպէս և այն բոլոր յայտարարութիւնները, որոնք կը գան համայնքների ներկայացուցիչների կողմից:

Այդ կոմիտէին պէտք է ուղղեն դեսպանները, իրանց թարգմանների միջոցով, այն բոլոր հազորագրութիւններն ու տեղեկութիւնները, որ նրանք անհրաժեշտ կը համարեն:

Կոմիտէն կարող է պահանջել վալիներից զեկուցագրեր՝ այն հարցերի մասին, որ ինքը կուզած կը լինի քննելու: Տարին երկու անգամ ընդհանուր նահանգապետները պէտք է ուղարկեն կոմիտէին մանրամասն յայտագիր՝ բանտերի վիճակի մասին:

Կոմիտէն, երբ յարմար համարի, կարող է ուղարկել իր անդամներից մէկին կամ մի քանիսին՝ վերայթիւնելու պատելու՝ քննութիւն կատարելու համար:

Կոմիտէն պէտք է ներկայացնէ Բարձրագոյն Գրանը

զեկուցագրեր այդ բոլոր հարցերի մասին, և իրաւունք պիտի ունենայ անմիջական յարաբերութիւնների մէջ մանել վալիների և մինիստրական իրաւասու ղեկարար տամենաների հետ:

IX

ՍԱՍՈՒՆԻ, ՏԱԼԻՈՐԻԿԻ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵՐԻ ԴԷՎՔԵՐԻ ԴԵՊՔԵՐԻՑ ՏՈՒԺԱԾ ԷԼՅԵՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Սասունի, Տալուրիկի և այլ տեղերի դէպքերի միջոցին՝ թէ իրանց անձով և թէ իրանց գոյքով փնտրուած հայերը պէտք է ստանան պատշաճաւոր հատուցումն ու վարձատրութիւն:

Կայսերական բարձր, վերահսկող կոմիսներին պէտք է յանձնել ուսումնասիրել այդ գործը և ձեռք առնել նպատակայարմար միջոցներ:

X

ԿՐՕՆԱՓՈՒՈՒԹԻՒՆ

Բ. Գուռը պէտք է հետևի, որ կրօնափոխութիւնը հաստատուած լինի այն ապահովող սկզբունքների վրայ, որ տալիս է 1856 թւի Հատար-շիւմայիւնը (յօդ. 10, 11, 12) և որոնք յաճախ, իրականութեան մէջ մնում են առանց գործադրութեան:

Այն անձինք, որոնք կը կամենան կրօնափոխ լինել, պէտք է լինեն չափահաս բացի դրանից, իրաւունք կըստանան կրօնափոխ լինել միայն մի շաբաթ անցած այն օրից, երբ տւել են յայտարարութիւն իրանց դիտաւո-

րութեան մասին, և այդ շաբաթւայ ընթացքում նրանք պէտք է գտնեն իրանց դաւանութեան պետի հսկողութեան տակ:

XI

ՀԱՅԵՐԻ ԱՌԱՆՉԵԱԸՆՈՐՀՈՒՄՆԵՐԻ ՊԸՀՊԱՆՈՒՄԸ

Բ. Գուռը պէտք է ձիշտ հրահանգներ տայ իշխանութիւններին՝ արգելելու, որ չը խախտեն հայոց հոգևորականութեան և հայ համայնքների այն առանձնաշնորհումներն ու իրաւունքները, որոնք յատկացրուած են նրանց 1863 թւի սահմանադրութեամբ (Հայերի Օրգանական Սահմանադրութիւն) և սուլթանների շընորհած բէրաթներով:

XII

ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՓՈՔՐ-ԱՍԻԱՅԻ ՄԻՒՍ ԵՒ ՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Փոքր-Ասիայի այն վիլայէթներում, ուր հայ ազգաբնակչութիւնը որոշ սանջակներում կազմում է ընդհանուր ազգաբնակչութեան մի նշանաւոր մասը, վալիին կից պէտք է լինի մի յատուկ քրիստոնէայ պաշտօնեայ, որին պէտք է յանձնել հայերի պաշտպանութիւնը: Այդ պաշտօնեան պէտք է ընդունի հայ ազգաբնակչութեան խնդրագրերը և հասցնէ նրանց ի գիտութիւն վալիի, որը՝ քրիստոնէայ պաշտօնեայի համաձայնութեամբ՝ ընթացք կըտայ նրանց, համեմատ դրանց բովանդակութեան:

Այդ պաշտօնեաները, բացի դրանից, պէտք է կանոնաւորապէս զեկուցագրեր ներկայացնեն Վ. Պօլսի վերաբննիչ մնայուն կօմիտէին:

Այն վիլայէթներում, ուր կան որոշ տեղեր (ինչպէս Հաջինը՝ Ադանայի վիլայէթում և Զէյթունը՝ Հալէպի վիլայէթում), որտեղ հայերը կազմում են ազգաբնակչութեան մեծամասնութիւն, վարչական այժմեան կազմակերպութիւնը պէտք է բարեփոխւի, և ըէֆօրմներ ծրագրի պահանջները՝ նահիաների կազմութեան վերաբերեալ՝ պէտք է գործադրւեն այդ տեղերում, որոնցից նախապէս կը կազմեն վարչական միութիւններ:

Մ Ր Ա Գ Ի Ր

Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Բ Է Ֆ Օ Ր Մ Ն Ե Ր Ի

ՈՐՈՄԱԳ ԳԷՏԱԳ Ե՛ ՄՅՑՐԻԻՆ ՆԱՅԱԿԱՆ ՆԱՀԱՅՆԵՐՈՒՄ

(ա յ ժ մ ե ա ն է ը զ ը ու մ ի, Բ ի Թ լ ի զ ի, Վ ա ն ի, Ս վ ա զ ի, Մ ա մ ու ը ր է Թ-Ի Լ Լ-Ա զ ի զ ի և Գ ի ա ը-բ է ք ի ը ի վ ի լ ա յ է Թ ն ե ը Ե):

I

Վ Ա Լ Ի Ն Ե Ր

ՅՕԴ. 1. — Վալին պէտք է ընտրւի պետութեան բարձրաստիճան պաշտօնեաներից, առանց խտրութեան կրօնի, որը վկայած կը լինի իբրև ամենից խելացի,

ընդունակ և ազնիւ մարդ: Հետևապէս, այն անձինք, որոնց նշանակումը ընդհանուր դժգոհութեան առիթ կը տայ, և կամ հասարակական ու քաղաքական պատճառներով անյարմար կը համարւի, չը պէտք է նշանակեն վալիի պաշտօնի մէջ:

Բ. Գուռը՝ համոզւած լինելով՝ որ ըէֆօրմների և ձեռք առած միջոցների իրական գործադրութիւնը էապէս կախած է այն անձերի բարձր յատկութիւններից, որոնք պէտք է վիլայէթների վարչութեան գլուխ անցնեն, — ամեն ջանք գործ պէտք է դնէ, որ այն պաշտօնեաները, որոնց կառավարութիւնը մտադիր է նշանակել, ունենան պահանջւած յատկութիւնները:

ՅՕԴ. 2. — Այդ եղանակով նշանակւած վալիները չը պէտք է յետ կանչեն կամ փոխեն, բացի այն դէպքերից, երբ նրանք, օրինական քննութիւնից յետոյ, յանցաւոր կը ճանաչեն հակաօրինական գործերի մէջ: Նրանք պէտք է նշանակեն հինգ տարով և նրանց լիազօրութիւնները կարող են նորոգել:

ՅՕԴ. 3. — Վալիները պէտք է ունենան օգնականներ (մուսավին), որոնք պէտք է լինեն քրիստոնեաներ, եթէ վալին ինքը մուսուլման է, և մուսուլմաններ՝ եթէ վալին քրիստոնեայ է: Մուսավիները, վալիների նման, պէտք է նշանակեն նորին կայսերական մեծութիւն սուլթանի կողմից:

Նրանք պէտք է յատկապէս ուղարկեն վալիի կողմից՝ վիլայէթի բնակիչներից խնդրագիրներ ընդունելու, ոստիկանութեան և բանտերի վրայ հսկելու և հարկերի հաւաքման կօնտրոլ անելու համար: Նրանք ժամանա-

կաւորացէս պէտք է կառավարեն վերայէթը՝ վալիի բացակայութեան ժամանակ:

Վալիին աջակցում է նահանգական ընդհանուր խորհուրդը, որի ընտրութեան համար հաստատուում է որոշ կարգ: Խորհրդի պարտաւորութիւնը պէտք է լինի՝ խորհրդակցել հասարակաց շահերի վերաբերեալ խնդիրների մասին, ինչպէս են՝ հողորդակցութեան ճանապարհներ շինելը, երկրագործական վարկի ֆոնդ կազմակերպելը, հողագործութեան, առևտրի և արդիւնաբերութեան զարգացումը և հանրային կրթութեան տարածումը:

II

ՄԻԻԹԵՍԱՐԻՓՆԵՐ

ՅՕԴ. 4. — Միւթեսարիֆները, որոնք սանջակների գլուխ պիտի անցնեն, պէտք է նշանակւեն նորին կայսերական մեծութիւն սուլթանից: Ամեն մի վերայէթում միւթեսարիֆների մի որոշ թիւը պէտք է քրիստոնեայ լինի: Քրիստոնեայ միւթեսարիֆները պէտք է նշանակւեն այն սանջակներում, որտեղ քրիստոնեաները մեծամասնութիւն են կազմում: Այն վերայէթներում, ուր միայն մէկ միւթեսարիֆ կը լինի, նա պէտք է անպայման քրիստոնեայ լինի, եթէ վալին մահմեդական է:

Միւթեսարիֆը օգնական կունենայ մի մուավին, որը պէտք է լինի քրիստոնեայ, եթէ միւթեսարիֆը մահմեդական է, և հակառակը: Մուավինը պէտք է գործէ միւթեսարիֆի փոխարէն, վերջինիս բացակայութեան ժամանակ:

III

ԳԱՅՄԱԳԱՄՆԵՐ

ՅՕԴ. 5. — Գայմագամները պէտք է նշանակւեն նորին կայսերական մեծութիւն սուլթանի կողմից, վալիի առաջարկութեամբ: Նրանք ընտրուում են վալիի ձեռքով այնպիսի անձինքների միջից, որոնք վայելում են ազգաբնակչութեան վստահութիւնը և համապատասխանում են այն պայմաններին, որոնք պահանջուում են գոյութիւն ունեցող օրէնքներով:

Իւրաքանչիւր սանջակում գայմագամների պաշտօնների որոշ թիւը պէտք է յատկացրուած լինի քրիստոնեաներին: Քրիստոնեայ գայմագամներ պէտք է նշանակւեն այն կազաններում, որտեղ քրիստոնեաները մեծամասնութիւն են կազմում:

ՅՕԴ. 6. — Յամենայն դէպս, քրիստոնեայ միւթեսարիֆների և գայմագամների թիւը, պակաս չը պէտք է լինի վերայէթի գայմագամների և միւթեսարիֆների ընդհանուր թւի մէկ երրորդից:


Գայմագամը, միւթեսարիֆի նման, պէտք է օգնական ունենայ մի մուավին, որը պէտք է լինի քրիստոնեայ, եթէ գայմագամը մահմեդական է, և հակառակը:

Միւթեսարիֆներին և գայմագամներին կից պէտք է լինի մի խորհուրդ, նման նահանգական ընդհանուր խորհրդին:

Կազայի խորհուրդը ընտրուում է նահիանների խորհուրդների կողմից, իսկ սանջակի խորհուրդը՝ կազանների խորհուրդների կողմից:

1637

1544



Նահանգական ընդհանուր խորհուրդը ընտրուած է սանջակաների խորհուրդների ձեռքով:

Աչ մի պաշտօնատար անձ այդ խորհուրդների անդամ լինել չէ կարող:

Խորհուրդներին պէտք է նախագահեն վալիները, միւլթեսարիֆները և գայմագամները, ըստ պատկանելոյն:

Խորհուրդները պէտք է բաղկացած լինեն չորս անդամներից, չը հաշւելով նախագահին. անդամներից երկուսը պէտք է մահմեդական լինեն, երկուսը քրիստոնեա

IV

ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՆԱՀԱՆԿՆԵՐԸ

307. 7. Իւրաքանչիւր կազա բաժանուած է նահանգների, (համայնական շրջաններ) որոշ թւով:

Նահիան մի հողային ստորաբաժանումն է, որ պարունակում իր մէջ մի քանի գիւղեր՝ իրանց անշարժ կալւածներով, հողերով, արօտատեղիներով և հողաբաժիններով: Նահիայի ամենանշանաւոր տեղը համարուած է գլխաւոր կենտրոն:

Իւրաքանչիւր նահիայի սահմանների որոշումը, ըստ կարելոյն, պէտք է կատարւի այնպէս, որ մէկ դաւանութեան պատկանող գիւղերը մտնեն մէկ նահիայի մէջ: Ընդհանրապէս խօսելով, պէտք է ուշադրութեան առնել նաև տեղագրական և ազգագրական պայմանները, նաև ժողովրդի յարմարութիւնները:

Նահիան պէտք է պարունակէ իր մէջ ամենաքիչը՝ 2000 բնակիչ, ամենաշատը՝ 10,000 բնակիչ:

Գիւղերի իւրաքանչիւր մի խումբ, որ կազմուած է նահիայի մի մասը և որի բնակիչները 1000-ից պակաս

չեն, կարող է պահանջել, որ իրանից առանձին մի նահիա կազմւի, այն պայմանով՝ որ յանձն առնէ նոր վարչութեան ծախքերը:

307. 8. Իւրաքանչիւր նահիա պէտք է կառավարւի մէկ միւլթիբի ձեռքով, օգնական ունենալով մի խորհուրդ, որը ընտրուած է ազգաբնակչութեան կողմից և բաղկացած է ամենաքիչը չորս, և ամենաշատը՝ ութ անդամներից:

Այդ խորհուրդը ընտրուած է իր անդամների միջից միւլթիբ և նրա օգնական:

Միւլթիբը պէտք է պատկանի այն դաւանութեան, որին պատկանում է բնակիչների մեծամասնութիւնը, իսկ օգնականները՝ միւս դաւանութեան: Խորհուրդը պէտք է նոյնպէս ունենայ մի քարտուղար:

307. 9. Եթէ նահիաների բնակիչները բոլորը պատկանում են մէկ դաւանութեան, խորհրդի անդամները պէտք է ընտրւեն այդ դաւանութեան պատկանող բնակիչներից: Եթէ համայնական շրջանի ազգաբնակչութիւնը խառն է, փոքրամասնութիւնը պէտք է ունենայ իր ներկայացուցիչը, համեմատ իր թւական կարեւորութեան, բայց այն պայմանով, որ 25 անից պակաս չը լինի:

307. 10. Միւլթիբները պէտք է ստանան նահիայի բիւջէից պատշաճաւոր ուժիկ: Նոյնպէս պէտք է մի որոշ ուժիկ տրւի խորհրդի քարտուղարին:

Որոշ շինութիւն պէտք է յատկացւի նահիայի խորհրդի և համայնական շրջանի վարչութեան ատենի համար:

30 ր. 11. — Նահիայի խորհրդի անդամները պէտք է լինեն օսմանեան հպատակ, պէտք է շահ ունենան նահիայում, պէտք է 30 տարեկան լինեն, և ընտրւեն այն անձանց միջից, որոնք վճարում են պետութեանը տարեկան 100 պիաստր հարկ, և որոնք դատապարտւած չեն եղել:

30 ր. 12. — շէնց որ խորհուրդը իր միջից ընտրէ միւզիբին, նրա անունը պէտք է հաղորդւի վալիին, որը պաշտօնապէս կը հաստատէ նրան, երբ համոզւի որ օրինական պահանջները կատարւած են:

30 ր. 13. — Իմամները, քահանաները, ուսուցիչները և այն բոլոր անձինք, որոնք կառավարութեան մէջ պաշտօն ունին, չեն կարող միւզիբի պաշտօն վարել:

30 ր. 14. — Խորհրդի անդամների կէսը պէտք է նորոգւի ամեն տարի. միւզիբները պէտք է մնան պաշտօնում երկու տարի: Միւզիբը և անդամները չեն կարող վերընտրւել յաջորդաբար՝ մի անգամից աւելի:

30 ր. 15. — Միւզիբի և խորհրդի անդամների լիազօրութիւնները, ինչպէս և նրանց ընտրութեան և փոխարինման եղանակը պէտք է կանոնադրուի, համաձայն Համայնքների վարչական կանոնագրութեան, յօդ. 14, 16, 17, 20, 21, 22, 23, 24, 25, 26 և համաձայն *Projet de loi sur des vilayets de la Turquie d'Europe* (§ 12):

30 ր. 16. — Նահիային պատկանող գիւղերից իւրաքանչիւրը պէտք է ունենայ մի մուխթար: Եթէ գիւղը

մի քանի թաղեր ունի և եթէ բնակիչները բաժանւած են զանազան դաւանութիւնների, այդ դէպքում ամեն մի թաղի և բնակիչների իւրաքանչիւր դաւանութեան համար մէկ մուխթար պէտք է լինի:

30 ր. 17. — Ոչ մի գիւղ չէ կարող միաժամանակ պատկանել երկու համայնական շրջանի՝ ինչ և լինի նրա բնակիչների վիճակը և թիւը:

V

ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆ

30 ր. 18. — Ոստիկանութեան պաշտօնեաները նշանակւում են համայնական շրջանի խորհրդի ձեռքով, նահիայի ազգաբնակչութեան միջից, առանց կրօնի խտրութեան. և թուով այնքան պիտի լինեն, որ կարողանան բաւարարութիւն տալ թէ տեղական պէտքերին և թէ վիլայէթի ժանդարմերիայի ծառայութեան:

30 ր. 19. — Նահիայի ոստիկանական պաշտօնեաները պէտք է զրւեն միւզիբի հրամանի տակ և պէտք է ունենան չափու շն երի կամ օն բաշին երի պաշտօններին համապատասխանող գլխաւորներ: Նրանք պէտք զինաւորւած լինեն և ունենան մի համազգեստ, որի ձևը կորոշւի յետոյ:

Նրանք ուձիկ կը ստանան նահիէի բիւջէից. իրանց պօլիցիական ծառայութիւնից դուրս, նրանք կարող են զբաղւել իրանց սովորական պարապմունքներով ևս: Նրանք կարող են լինել հեծեալ կամ ոչ-հեծեալ, նայելով իրանց ծառայութեան պահանջներին:

Աշ-մահմեդականները, որոնք ենթակայ են „բէգէլ-ասկէրիէի“ հարկին և որոնք կարող են ոստիկանական ծառայութեան կոչուել, ազատ կը լինեն այդ հարկի վճարումից, որչափ որ նրանք կը գտնեն ոստիկանական ծառայութեան մէջ:

ՅՕԴ. 20. — Նահիայի ոստիկանութեան պաշտօնեաների առաջին պարտաւորութիւնը պէտք է լինի՝ տեղական կերպով պահպանել կարգը և խաղաղութիւնը նահիայի շրջանի մէջ և ճանապարհների վրայ: Բացի դրանից, նրանք միւղիլի հրամանի համաձայն, պատիւն ուղեկցելու համար՝ մարդիկ պիտի տան, այլև պիտի օգնեն միւղիլին՝ ի կատար ածելու դատաստանական վճիռները և օրէնքի պահանջները:

VI

ԺԱՆԳԱՐՄԷՐԻԱ

ՅՕԴ. 21. — Ամեն մի նահանգում, յատուկ օրէնքի հիման վրայ, կը կազմակերպուի նահանգական ժանդարմերիա, որի բարձր և ստորին պաշտօնեաները (սպաներ և զինւորներ) կընտրուեն կայսրութեան հպատակների բոլոր դասակարգերի միջից:

Ժանդարմերիան պէտք է կազմակերպուի վիլայէթում, բոլոր բնակիչների միջից, առանց խտրութեան ցեղի կամ կրօնի: Ժանդարմերիայի երկու երրորդականը կը կազմուի նահիայի ոստիկանութեան պաշտօնեաների միջից, կէսը մահմեդական, կէսը ոչ-մահմեդական: Մնացած մի երրորդականը բաղկացած պիտի լինի չափու շնե-

րից և բաշչափու շներից վերցրած կանոնաւոր զօրքի ամենաընդունակ մարդկանց միջից:

Վարդապահութեան և զինավարժութեան կողմից, ժանդարմերիան պէտք է գտնուի զինւորական մինիստրի իշխանութեան տակ: Նրա ծախքը պէտք է հոգացուի վիլայէթի հաշուով: Ժանդարմերիայի գնդի սպաների (օֆիցէր) ուժիկը պակաս չը պէտք է լինի, քան կանոնաւոր զօրքի համապատասխան աստիճանի սպաների ուժիկը:

VII

ԲԱՆՏԵՐԸ

ՅՕԴ. 22. — Այն անձինք, որոնք բանտարկուած են, բայց զեռ չեն մեղադրուած, չը պէտք է խառնուեն այն անձանց հետ, որոնք արգէն կրում են իրանց պատիժը, դատավճից յետոյ:

Բանտերը պիտի կատարեն առողջապահական անհրաժեշտ պահանջները, և պէտք է հսկողութիւն լինի, որպէսզի բանտարկեալները չենթարկուեն խիստ պայմանների:

Վալին պիտի նշանակէ բանտերի ղերեկտորներին և պահպաններին, որոնց մէջ պէտք է լինի ոստիկանական պաշտօնեաների և ժանդարմների մի որոշ թիւ:

VIII

ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷ

ՅՕԴ. 23. — Վալիները պէտք է հաստատեն վիլայէթների և սանջակների գլխաւոր քաղաքներում՝ նախ-

նական քննիչ կոմիտէներ, բաղկացած նախագահից և երկու անդամներից, մասնագիտական և ոչ-մասնագիտական:

Կոմիտէի պաշտօնը պիտի լինի՝ քննել ժանդարմների ձեռքով կատարած ձերբակալութիւնների պատճառները և հրամայել անմիջապէս հարցաքննութեան ենթարկելու բռնաճանաչներին ու բանտարկել տալ նրանց, եթէ այն յանցանքները, որոնց մէջ նրանք ամբաստանուում են, կրում են այնպիսի բնուորութիւն, որ ենթակայ է օրէնքի սահմանած պատիժներին. կարգադրել՝ անմիջապէս ազատ թողնելու, ոստիկանութեան հսկողութեան տակ այն բանտարկեալներին, որոնց վարձուները այլևս կարիք չէ թողնում, որ օրէնքը գործադրւի. հսկել, որ ոչ մի անձ, առանց պատճառի և ապօրէն կերպով բանտ չը գցւի: Այդ նպատակով կոմիտէները պէտք է այցելեն բանտերը և քննեն բանտարկեալների վիճակը:

Կոմիտէները պէտք է կազմեն զեկուցագրեր և ուղարկեն վալիներին, յիշատակելով ոստիկանութիւն բերած անձերի միջից նրանց՝ որոնք ազատ են թողնուած, այլև նրանց, որոնք մնում են բանտի մէջ:

IX

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹԻՒՆ ՔԻՐՊԵՐԻ ՎՐԱՅ

Յ 0 Դ. 24. — Թափառական քիւրքերին կառավարելու համար՝ իւրաքանչիւր վիլայէթում վալին պէտք է ունենայ իր ձեռքի տակ մէկ Աշիրէթ-Մէմուրի (մէկ պաշտօնեայ, որի գործը պիտի լինի՝ հսկել քիւրք ցեղերի վրայ: Այդ պաշտօնեան պէտք է իրաւունք ունենայ ձերբակալել աւազակներին և ուրիշ չարագործներին, ու պահանջել, որ նրանց ենթարկեն սովորական

դատարաններին: Նա պէտք է ունենայ իր ձեռքի տակ մի բաւարար պահակախումբ և կարող է, հարկաւոր դէպքում, պահանջել տեղական ոստիկանութեան աջակցութիւնը:

Նրա իշխանութեան տակ դրւած պաշտօնեաների մի որոշ թիւ պիտի է ուղեկցի ամեն մի ցեղի՝ նրա տարեկան քոչի ժամանակ: Նրանք պէտք է գործադրեն ոստիկանական իրաւասութիւն, բանտարկեն բոլոր չարագործներին և յանձնեն նրանց սովորական դատարաններին:

Թափառական ցեղերի արօտատեղերի և բանակատեղերի սահմանները պէտք է ճշտութեամբ որոշուած լինեն: Այդ քոչերը չը պէտք է պատճառ դառնան զբրկանք հասցնելու այն գաւառների բնակիչներին, որտեղով անցնում են թափառական ցեղերը և կամ ժամանակաւորապէս գրաւում: Եթէ նրանք որեւէ յափշտակութիւն գործեն գիւղացիների սեփականութեան դէմ կամ որեւէ զրկանք հասցնեն գիւղացիներին, այդ օրից սկսած կարգելի նրանց՝ որեւէ տեղափոխութիւն կամ քոչ:

Այն կանոնները, որոնք գոյութիւն ունեն դէնք կրելու վերաբերմամբ, խստիւ պիտի գործադրեն բոլոր քիւրք ցեղերի մէջ, լինեն նրանք հաստատաբնակ, թէ թափառական:

Ջանքեր պիտի գործ դրեն պատաստելու թափառական ազգաբնակութեանը նստակեաց կեանքի սկզբունքները, բնակացնելով նրան երկրագործութեան. այդ նպատակով՝ նրանց պէտք է յատկացնել որոշ հողեր այնպիսի տեղերում, ուր նրանց հաստատուելը չէ կարող որեւէ ֆեսս հասցնել նստակեաց ազգաբնակչութեան բարեկեցութեանը և խաղաղութեանը:

Ընտրելու և ընտրւելու (նահիանների խորհրդի համար) իրաւունքները չը պէտք է պատկանեն այն անձանց, որոնք ոչ-նստակեաց ազգաբնակութեան մասն են կազմում, կամ որոնք հաստատուած չեն մշտական ու մնայուն կերպով մի որևէ նահիայի հողի վրայ:

X

ՀԱՄԻԳԻԷՅԻ ՀԵԾԵԼԱԶՕՐԲԸ

ՅՕԳ. 25. — Այն դէպքերում, երբ հարկաւոր համարւի գործ դնել Համիդիէյի հեծելազօրքի գնդերը այժմ գոյութիւն ունեցող օրէնքներով սահմանուած զինավարժութեան պէրիօդներից դուրս, այդ գնդերը կարող են գործածուել և բանակել միայն կանոնաւոր զօրքի գնդերի հետ միասին, որի մի երրորդ մասից աւելի չը պէտք է լինեն:

Սովորական ժամանակներում և ծառայութիւնից դուրս, Համիդիէյի հեծելազօրնը, չը պէտք է կրէ ոչ նշանազգեստ և ոչ էլ զէնք: Այդ պարագայում նրանք կարող են ենթարկուել սովորական դատարաններին, ինչպէս արդէն այդ արձանագրուած է Համիդիէյի կանոնադրութեան մէջ, համաձայն Բէդիֆների այժմեան կանոնադրութեան (Օսմանեան Զինւորական Գատաստանագիրք, յօդ. 4):

XI

ԿԱԼԻԱԾԱԳՐԵՐԻ ՀԱՐՑԸ

ՅՕԳ. 26. — Պէտք է կազմեն յատուկ յանձնաժողովներ, բաղկացած իւրաքանչիւրը մի նախագահից և

չորս անդամներից, — երկուսը մահմեդական և երկուսը քրիստոնեայ, — որոնց պաշտօնը պիտի լինի՝ քննել սեփականութիւններին վերաբերեալ անպարտաւարները, և շակել այն անարգարութիւններն ու անկանոնութիւնները, որոնք կը նկատուեն:

Մի յատուկ յանձնաժողով ապագայում պիտի որոշէ ամենալաւ եղանակը, որով կարելի լինէր երաշխաւորել սեփականութեան իրաւունքները:

XII

ՏԱՍԱՆՈՐԴԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԺՈՂՈՎԵԼԸ

ՅՕԳ. 27. — Բոլոր հարկերը, հաշւելով դրանց մէջ և տասանորդական տուրքերը, պէտք է հաւաքուեն ուղղակի՝ նահիայի խորհուրդների կողմից ընտրուած և միւրգիբի իշխանութեան տակ գտնուող հարկահանների ձեռքով:

Նահիայի բոլոր բնակիչները փոխադարձաբար պատասխանատու են իրանց վրայ դրուած հարկերի լիակատար վճարման համար:

ՅՕԳ. 28. — Տասանորդական տուրքերի կապով տալը և ժողովորդին բռնի բանեցնելը վերացուած է:

Իւրաքանչիւր վարչական կենտրոն, սկսած նահիայից, պէտք է իր հաւաքած հարկերից վերցնի այն գումարը, որը հարկաւոր է իր վարչութեան ծախքերի համար, համաձայն նախորոշած և կառավարութեան կողմից հասանութիւն գտած բիւջէի: Նոյնպէս և վելայէթի ֆինանսական վարչութիւնը պէտք է վերցնէ նահանգի հարկերի ամբողջ քանակութիւնից՝ վելայէթի վարչութեան համար հարկաւոր գումարը, հաշւելով դրա մէջ

հասարակական աշխատանքների և հանրային կրթութեան ծախքերը:

Ազգաբնակչութիւնը ոչ մի դէպքում պարտաւորւած չը պիտի լինի ձրիաբար հայթայթել զօրքին կամ պաշտօնեաներին բնակարան և նրանց ապրուստի համար հարկաւոր պաշարը:

Այն դէպքերում, երբ հարկերը չը վճարելու համար բռնի վաճառք է նշանակուում, պէտք է ճշտօրէն հսկել, որ ժողովուրդը չը զրկուի առաջնակարգ կարևորութեան առարկաներից և այն գործիքներից, որ նա բանեցնում է:

XIII

ԱՐԿԱՐԱՆԻ ԱՏՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 29. — Նահիայի իւրաքանչիւր բաժնում պէտք է լինի ծերերի մի խորհուրդ, որին պէտք է նախագահէ մուխթարը, և որի պաշտօնը պիտի լինի ընտանեւոր լուծել բնակիչների մէջ ծագած վէճերը:

ՅՕԴ. 30. — Իւրաքանչիւր կազայում նահիաների թւի համեմատ, պէտք է լինեն բուսական թւով հաշտարար դատաւորներ, որոնց նշանակում է արդարագատութեան մինիստրը, վալիի առաջարկութեամբ: Այդ դատաւորներից մէկը անպատճառ պիտի ապրի կազայի գլխաւոր քաղաքում: Հաշտարար դատաւորների մի երրորդ մասը՝ իւրաքանչիւր կազայում՝ պէտք է քրիստոնեաներ լինեն: Քրիստոնեայ հաշտարար դատաւորները պէտք է բնակութիւն ունենան այն կենտրոններում, որտեղ քրիստոնեայ ազգաբնակչութիւնը մեծամասնութիւն է կազմում:

ՅՕԴ. 31. — Հաշտարար դատաւորը իրաւասութիւն պիտի ունենայ դատելու՝

ա) Քրէական գործերում, — առանց բողոքի (appel) իրաւունքի, օրէնքի դէմ գործւած զեղծումները, որոնք դուրս են ոստիկանական սովորական պատիժներից և, բողոքելու իրաւունքով, այնպիսի փոքր յանցանքներ, որոնց պատիժը՝ 500 պիաստր տուգանքից բարձր և երեք ամիս բանտարկութիւնից աւելի չէ:

բ) Քաղաքացիական գործերում, — առանց բողոքի իրաւունքի, բոլոր անձնական գործերը, քաղաքացիական և առևտրական դատերը, որոնց գումարը հազար պիաստրից չէ անցնում, և՛ բողոքի իրաւունքով, այնպիսի գանգատներ, որոնք հասնում են հինգ հազար պիաստրի:

ՅՕԴ. 32. — Հաշտարար դատաւորը կարող է կազմել և հաշտարար ատեան. նա կարող է, երկու կողմերի հաւանութեամբ, նշանակել միջնորդ դատաւորներ՝ լուծելու համար այնպիսի վէճեր, որոնց գումարը հինգ հազար պիաստրից աւելի է: Միջնորդ դատաւորների կայացրած վճուի դէմ դատաւորները իրաւունք չունեն բողոքելու:

ՅՕԴ. 33. — Վազաների դատարանների տեղը բռնող հաշտարար դատաւորների վճիռների դէմ, քաղաքացիական գործերում, բողոք կարելի է տալ սանջակի դատարանին:

ՅՕԴ. 34. — Բանտարկութեան վերաբերմամբ հաշտարար դատաւորների արձակած այն վճիռները, որոնք բոլոր ինստանցիաներից անց են կացել, պէտք է ի գործ

գրեն կազայի բանառում: Միւղիրները պարտաւոր են աջակցել հաշտարար դատաւորներին ի կատար ածելու ինչպէս .քաղաքացիական, այնպէս էլ քրէական վճիռները:

Յ 0 Դ. 35. — Կազայի ատեանները ջնջած լինելով, սանջակի դատարանները ձեռնհաս են դատելու այն քաղաքացիական վէճերը, որոնք հինգ հազար պիաստրից չեն անցնում, նոյնպէս և հաշտարար դատաւորների քաղաքացիական վճիռների դէմ տւած բողոքները:

Սանջակի դատարանները պէտք է ունենան միայն քաղաքացիական ատեան, քանի որ քրէական ատեանի տեղը բռնում է շրջիկ նահանգական ատեանը:

Սանջակի ատեանները պէտք է բաղկացած լինեն մէկ նախագահից, դիպլոմաւոր դատաւոր, որին նշանակում է արդարադատութեան մինիստրը և երկու անդամներից, որոնց ընտրում է վալին, սանջակների խորհուրդների ձեռքով կազմած ցուցակների միջից:

Յ 0 Դ. 36. — Սանջակի քրէական ատեանների բաժինները նոյնպէս փոխարինւում են շրջիկ նահանգական ատեաններով: Նահանգական ատեանները բաղկացած են մէկ նախագահող դատաւորից, որը ընտրւում է վերայէթի բարձրագոյն խորհրդի անդամների միջից. նրան պաշտօնակից են լինում երկու անդամներ, որոնք նշանակւում են բողոքարկու ատեանի ձեռքով, սանջակի հաշտարար դատաւորների միջից. մէկը մահմեդական, միւսը քրիստոնէայ: Հաշտարար դատաւորները պէտք է ստանան որոշ ուժիկ, շրջիկ նահանգական ատեանների ամբողջ պտոյտի ժամանակ:

Յ 0 Դ. 37. — Նահանգական ատեանը հերթով պէտք

է շրջի բոլոր կազաները, հաշւելով և սանջակի գլխաւոր քաղաքը, ուր նրա ներկայութիւնը հարկաւոր կը լինի: Նա ձեռնհաս է քննելու, բողոքի իրաւունքով, հաշտարար դատաւորների վճիռների դէմ տւած գանգատները, այլև, առանց բողոքի իրաւունքի, այն գործերը, որոնց պատիժը հինգ հազար պիաստրից կամ երեք ամիս բանտարկութիւնից բարձր է: Քրէական գործերի վերաբերմամբ նահանգական դատարանների արձակած վճիռները չեն կարող գործադրւել, առանց վճռաջինջ ատեանից անցնելու:

Յ 0 Դ. 38. — Հասնելով կազան, նահանգական ատեանի նախագահը պէտք է պահանջէ, դատաստանական քննիչի միջոցով, այն բոլոր գործերի ցուցակը, որոնք քննւած են և անմիջապէս իրան պիտի յանձնուին, նաև մի ուրիշ ցուցակ այն գործերի, որոնք դեռ քննութեան ներքոյ են: Եթէ նա նկատէ այդ վերջինի մէջ որևէ անկանոնութիւն կամ անտեղի յետաձգութիւն, անմիջապէս մի զեկուցագիր պիտի ուղարկէ արդարադատութեան մինիստրին:

Նահանգական ատեանը՝ հասնելով կազան կամ այնտեղից հեռանալիս՝ պէտք է այցելէ բանտերը, քննէ բանտարկեալների վիճակը և ստուգէ բանտարկւածների ցուցակը:

Յ 0 Դ. 39. — Վիլայէթի բարձրագոյն ատեանը պէտք է բաղկացած լինի մի նախագահից, և այնքան անդամներից, որ հնարաւորութիւն ունենան քննել իրանց առաջարկած քաղաքացիական գործերը և մատակարարել շրջիկ նահանգական ատեաններին նախագահներ:

Բարձրագոյն ատեանը գործում է քաղաքացիական

դատերում, ինչպէս Բողոքարկու ատեան, իսկ Արեւիկան
գործերում՝ ինչպէս Նահանգական ատեան: Նրա նիստը
կանոնաւոր կը համարւի ամեն անգամ, երբ ներկայ կը
լինեն մի նախագահ և երկու անդամ: Բացի դրանից,
նա պէտք է ունենայ մի ընդհանուր դատախազ և բա-
ւական թւով պաշտօնակատարներ:

Յ Օ Դ. 40. — Հաշտարար դատաւորների, ինչպէս և ամեն
տեսակ դատարանների դատաւարութիւնը, պէտք է կա-
տարւի թիւքերէն լեզուով: Թիւքերէն ընագրին պէտք
է կցւի՝ նայած տեղին ու դատող կողմերին՝ հայերէն
թարգմանութիւնը:



PUBLICATIONS

DE

l'Union des Etudiants Arméniens de l'Europe.

En français :

- 1) Ed. BERNSTEIN. **Les souffrances du Peuple arménien et le devoir de l'Europe** . . . Fr. 0.40
- 2) Alb. VANDAL. **Les Arméniens et la Réforme de la Turquie** . . . » 0.20
- 3) FRANCIS DE PRESSENSÉ. **L'Arménie et la Macédoine** . . . » 0.40
- 4) Georges BRANDÈS. **L'Arménie et l'Europe** . . . » 0.40

En allemand :

- 5) Ed. BERNSTEIN. **Die Leiden des armenischen Volkes und die Pflichten Europas** . . . » 0.50
- 6) D'ESTOURNELLE DE CONSTANT ; DENYS COCHIN ; FRANCIS DE PRESSENSÉ ; JEAN JAURÈS ; PAUL LEROLLE ; ANATOLE LEROY-BEAULIEU : **Für Armenien und Macedonien.** » 0.60
- 7) Georg BRANDÈS. — **Armenien und Europa** . . . » 0.40
- 8) ILSE FRAPAN. **Die armenische Frage.** . . . » 0.40

En arménien :

(Voir la liste ci-contre).

ԱԶԱՏ-ԳՐԱԴԱՐԱՆ

Խմբագրութեամբ

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍՒՄՆԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԼԻԱԶՈՐ ԿՕՄԻՏԵ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

գինը, սանտ

- 1) ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ 20
- 2) ԱՊՍՏԱՄԲ ՍՍԱՌԻՆԸ 20
- 3) ՀԱՅՐԵՆԱՍԷՐԻ ՏԱՂԵՐԸ 20
- 4) ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻՆ 20
- 5) ՀԵՐՈՍԸ 20
- 6) ԼԵՌԱՆ ՌԱԶՄԻԿԸ 20
- 7) ՄԱՐԿ ԲՅՅԱՐԻՍ 20
- 8) ՀԱՅԿԱԿԱՆ ԲԷՅՈՐՄԵՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ 10

(Պատրաստուած էն այլ ԴԱՔԵՐ)

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԷԶԸ, հայաստան, չուտով կը
վաճառանին ի)

ՕՏԵՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

(Տես նախորդ էրկտը)

Adresse : Union des Etudiants Arméniens de l'Europe,
rue de l'Ecole-de-Chimie, 2, Genève (Suisse)

« Ազգային գրադարան



NL0194238

